



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԱԶԳԱՅԻՆ Վ. ԵՒ Ա. ՇԱՍԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԱՐԶԱՐԱՆԻՆ ՀԻՄՆԱՔԱՐԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԴՊՐՈՑԸ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ԱՐԵՒՆ Է

ՅԱՅՏԱՐԱՐԵՅ ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հովուապետական այցելութեան հիմնական նպատակներէն մէկն է մղում տալ Հայ Դպրոցի զարգացման ու բարգաւաճման, միաժամանակ գնահատանք արտայայտել մեր վարժարաններուն մատուցած ծառայութեանց մասին, թափ տալ Հայ Դպրոցին եւ անոր ծածկին տակ իրագործուող հայեցի կրթութեան ծրագիրներուն:

Հովուապետական այցելութեան առաջին իսկ օրէն, Վեհափառ Հայրապետը այս առաջադրանքը հանգամանօրէն արտայայտեց իրերայաջորդ հանդիպումներու, ձեռնարկներու եւ այցելութիւններու ընթացքին իր ուղղած պատգամներուն մէջ: Իսկ առաջին գործնական քայլը եղաւ Նորին Ս. Օծութեան այցելութիւնը՝ Ազգ. Վահան եւ Անուշ Շամլեան վարժարան, Չորեքշաբթի, 12 Հոկտեմբերի առաւօտուն, բացումը կատարելով նմանօրինակ այցելութիւններու շարքի մը: Վեհափառ Հայրապետին կ'ընկերանային Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, գաւազանակիր Հոգ. Տ. Մեսրոպ Վրդ. Սարգիսեան, հոգեւորականաց դասու ներկայացուցիչներ, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Վահէ Եագուպեան, Կլենտէյլի քաղաքապետական խորհուրդի անդամներ Տեարք Րաֆֆի Մանուկեան եւ Ֆրէնք Զինթերօ, Ազգ. Վարչութեան, Խնամակալ Մարմինի եւ յանձնախումբերու ներկայացուցիչներ, Հ.Յ.Դ. «Չաւարեան» կոմիտէի ներկայացուցիչներ եւ վարժարանի ծնողներէն հոյլ մը:

Վարժարանի մուտքին, աշակերտները դեմ դիմաց շարք կազմած էին ի պատիւ Վեհափառին ու շքախումբին. Վեհափառ Հայրապետը նախ կատարեց աղ ու հացի ականդական օրհնութիւնը, ապա զինք դիմաւորող Տնօրէնին՝ Տիար Վազգէն Մատենլեանի, դաստիարակներուն, անձնակազմին եւ աշակերտներուն իր օրհնութիւնները բաշխելով, ուղղուեցաւ վարժարանին բակը. դիմաւորողներուն շարքին եր

վարժարանին ճակատը զարդարող հայկական եռագոյն մը, որուն վրայ արձանագրուած էր՝ «Հայերէն Խօսիք»...

Բակին մէջ համախմբուած աշակերտները, դաստիարակներն ու հիւրերը ծափողջոյններով արտայայտեցին իրենց ուրախութիւնը: Դիմաւորումին մասնակից էին Ազգ. Թաւեան եւ Թիւֆէնքեան մանկամտօրներուն տնօրէնուհիներն ու ուսուցիչները, իսկ մանկամտօրներուն աշակերտները աւելի ուշ միացան սրահին մէջ ներկայացուած գեղարուեստական յայտագիրին:

Տնօրէնը արտասանեց ողջոյնի հակիրճ խօսք մը. ան վարժարանին համար «կրկնակօրէն պատմական օր» որակեց Վեհափառ Հայրապետին այցելութիւնը, տրուած ըլլալով, որ ան նաեւ պիտի կատարէր վարժարանի նոր մարզարանին հիմնաքարի օրհնութիւնը, իրագործման ճամբու մէջ դնելով տարիներու երազ մը: Ապա, ան հրաւիրեց Առաջնորդ Սրբազանը, որպէսզի ներկայացնէ Վեհափառ Հայրապետը:

Առաջնորդ Սրբազանը ուրախութեան ու հպարտանքի առիթ նկատեց Վեհափառ Հայրապետի օրհնաբեր այցելութիւնը, յիշեցնելով, որ Թեմիս շնորհուած հովուապետական այժմու այցելութեան գլխաւոր նպատակներէն մէկն է Հայ Դպրոցը: Ան վեր առաւ դաստիարակներուն ու ծնողներուն գուրգուրացողի դերը, որ կը զօրացնէ հայ դպրոցը: Ապա, ան հրաւիրեց «բոլորիս ուսուցիչը, տնօրէնն ու հայրը» եղող Հայրապետը, որպէսզի ուղղէ իր պատգամը:

«ԴՈՒՔ ՊԻՏԻ ՁԵՐՄԱՑՆԷՔ ՄԵՐ ԿԵԱՆՔԸ»

«Արեւը կը լուսաւորէ ու կը ջերմացնէ բոլորս, աշխարհն ու մարդկութիւնը: Առանց արեւի, խաւար ու մութ կ'ըլլայ: Մարդկային կեանքին համար, արեւը կենսական նշանակութիւն ունի, իսկ հայ կեանքի արեւը՝ հայ դպրոցն է. առանց հայ դպրոցին, մեր ազգային կեանքը խաւարի կը մատնուի», ըսաւ Վեհափառ Հայրապետը ու խօսքը աշակերտներուն ուղղելով՝ շարունակեց. «Դուք կոչուած էք ըլլալու հայ կեանքի արեւը: Այս վարժարանէն դուք պիտի առնէք մեր մշակոյթին ու ազգային ոգիին ջերմութիւնը, եւ երբ մեծնաք՝ մեր ազգային կեանքը պիտի լուսաւորէք ու ջերմացնէք այդ արեւով: Հայ Դպրոցը ձեզի կը փոխանցէ մեր եկեղեցւոյ ու ազգային կեանքի հարստութիւնները, իտեալները, որպէսզի դուք դառնաք մեր ազգային կեանքի արեւը, լոյս ու ջերմութիւն տարածէք մեր կեանքին մէջ»: Նորին Ս. Օծութիւնը բարձր գնահատեց բոլոր այն ծնողները, որոնք հայկական դպրոցին վստահած են իրենց զաւակներուն հոգիներուն եւ միտքերուն հարստացման գործը, եւ կոչ ուղղեց ոչ-հայկական վարժարաններ յաճախող հայ աշակերտներու ծնողներուն, որ հայկական դպրոցի ջերմութեան առաջնորդեն իրենց զաւակները, որորվետեւ »օտար դպրոցին մէջ հայ մանուկն ու պատանին կ'օտարանան ու կը պարպուին հայկական արժէքներէ»: Վերջապէս, Վեհափառ Հայրապետը գնահատանք արտայայտեց տնօրէնութեան, դաստիարակներուն եւ անոնց բոլոր գործակիցներուն, վարժարանի բարերարներուն ու բարեկամներուն:

ՀԻՄՆԱԶԱՐԻ ՕՐՅՆՈՒԹԻՆ

Բոլորին ուրախութիւնն ու ցնծութիւնը կրկնապատկուեցաւ, երբ Նորին Ս. Օծութիւնը կատարեց վարժարանի մարզարանին հիմնաքարին օրհնութիւնը: Արարողութիւնը կատարուեցաւ վարժարանի արեւելեան կողմի բակին մէջ: Աղօթակից էին Առաջնորդ Սրբազանը, միաբան ու քահանայ հայրեր: Առաջնորդ Սրբազանը, Տնօրէնը, Ազգ. Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պողոսեան եւ քաղաքապետական խորհուրդի երկու ներկայացուցիչները մասնակից եղան օրհնուած հիմնաքարերուն գետեղման:

Հիմնօրհնէքի արարողութեան աւարտին, Վեհափառ Հայրապետն ու շքախումբը, Տնօրէնին եւ ուսուցչական կազմի ներկայացուցիչներուն ընկերակցութեամբ, այցելեցին երկու դասարաններ: Տիար Սարո Նազարեան գործնական բացատրութիւններ տուաւ դասարաններուն մէջ օգտագործուող ուսուցման արդիական սարքերուն՝ Smart Boardին մասին: Վեհափառ Հայրապետը գոհունակութիւն արտայայտեց արդիական սարքերու օգտագործման համար, սակայն նաեւ շեշտեց, որ մեքենական սարքերը ոգի չեն փոխանցեր, «ոգի փոխանցողը ուսուցիչն է»: Եւ իբրեւ գործնական արտայայտութիւն՝ ոգեղէն արտայայտութեամբ ինք ընթերցեց ցուցատախտակին վրայ տեղադրուած՝ Եղիշէ Չարենցի «Ես իմ ամուշ Հայաստանի...» բանաստեղծութենէն երկու տուն:

Շքախումբը անցաւ հայերէնի դաստիարակներէն՝ Օր. Անի Պերպերեանի դասարանը, որ այդ պահուն կրօնի դասապահ ուներ: Վեհափառ Հայրապետը հարցումներ ուղղեց աշակերտներուն, պատասխանեց անոնց հարցումներուն, եւ որ օրհնութիւնն ու գնահատանքը շնորհեց ներկաներուն:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԹՆՈՒՈՐՏ՝ ԵՐԳԵՐՈՎ

Սրահ ուղղուելէ առաջ, վարժարանի տնօրէնութիւնը պատշաճ հիւրասիրութիւն մը կազմակերպած էր հիւրերուն համար: Ապա, Վեհափառ Հայրապետն ու շքախումբը մուտք գործեցին սրահ, ուր հիւրընկալ վարժարանին ու մասնակից մանկամտւորներուն աշակերտները գեղարուեստական գեղեցիկ յայտագիր մը պատրաստած էին:

Աշակերտները, մանուկ թէ պատանի, խումբ առ խումբ բեմ բարձրացան եւ մթնոլորտը ծաղկեցուցին երգերու փունջով մը, հայ երգի մթնոլորտը տարածելով սրահին մէջ: Առաջին երգն էր Հայրապետական Մաղթանքը իսկ եզրափակիչ երգերը՝ «Կիլիկիա»ն եւ Ի Վեհ Բարձանց մաղթերգին «...Պահեա ով Տէր անսասն» համարը: Միւս երգերը՝ հայ լեզուն, հայ դպրոցը գովերգող՝ ջերմացնող պատանիներ էին:

Գեղարուեստական յայտագիրին աւարտին, վարժարանի փոխ տնօրէնուհի Տիկին Ռիթա Գաբրիելեան, ողջոյնի հակիրճ խօսքէ մը ետք, յայտարարեց, թէ աշակերտներուն ներկայացուցիչները յուշանուէր մը ունին Վեհափառին: Նորին Ս. Օծութիւնը, իր կարգին, յուշանուէր մը յանձնեց աշակերտներուն:

Հոգեխռով հանդիպումը վերջ գտաւ Վեհափառ Հայրապետին «Պահպանիչ»ով:

HIS HOLINESS CATHOLICOS ARAM I VISITS CHAMLIAN SCHOOL

One of the main themes of the Pontifical Visit of H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, is the further strengthening of Armenian Schools, and His Holiness has repeatedly through his messages emphasized the unique importance of the Armenian School.

In this regards, during his Pontifical Visit to the Western United Schools, His Holiness will be visiting a number of Prelacy Schools. The first of these visits took place on the morning of Wednesday, October 12, 2011, when His Holiness visited Vahan and Anoush Chamlian School in Glendale. His Holiness was accompanied by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Yeprem Tabakian, staff bearer Very Rev. Fr. Mesrob Sarkissian, and clergy members. In attendance were Glendale City Council members Rafi Manoukian and Frank Quintero, Central Executive member Mr. Vahe Yacoubian and Executive Council members, Board of Regents and ARF Zavarian Gomideh members, school administration, faculty, and parents.

At the entrance of the school, students were lined up to welcome His Holiness. After conducting the traditional salt and bread ceremony, His Holiness conveyed his blessings to Principal Vazken Madenlian, administrators, and students. The Directors of Tavlian and Tufenkian Pre-Schools were also in attendance, and students arrived later for the cultural program in the school auditorium.

In his welcoming remarks, Principal Vazken Madenlian touted the Pontifical Visit of His Holiness to Chamlian as a historic day, especially given that His Holiness would be consecrating the foundation stones of the school's new gymnasium, a dream that was years in the making. He then invited the Prelate to introduce His Holiness.

The Prelate stated that the visit of His Holiness to Chamlian was an occasion of great joy and pride, reminding that one of the main focuses of the visit is to further strengthen our schools. He lauded the teachers and parents for their invaluable role in the development of our youth, which also serves to strengthen our schools. He then invited His Holiness to deliver his message.

The sun illuminates and warms the earth and mankind. Without the sun, there is darkness. The sun of Armenian life is the Armenian School, and without our schools our national life would be left in darkness, said His Holiness. Addressing the students, His Holiness said that they are called to be the sunshine of our lives. In an Armenian School, you receive the warmth of our cultural and national spirit, you are enriched with our religious and national treasures, and when you grow up you will illuminate our collective lives with that spirit and ideals. His Holiness commended all the parents who have entrusted their children to the Armenian School to enrich their minds and souls, and urged all parents to send their children to Armenian Schools. In conclusion, His

Holiness commended the Principal, Directors, and all educators and faculty who serve for the splendor of the Armenian Church.

His Holiness and entourage then headed to the site of the school's new gym for the consecrating of the foundation stones. After His Holiness consecrated the stones, the Prelate, Principal, Executive Council Chair Mrs. Rima Boghossian, and Glendale City Council members participated in the placing of the stones.

A visit to two classrooms followed. Teacher Mr. Saro Nazarian described a new teaching tool utilized at the school called Smart Board. His Holiness and entourage next visited the classroom of Armenian teacher Ms. Ani Berberian, who at that moment was teaching religion class. His Holiness asked the students questions, answered their questions, and conveyed his blessings.

After a reception in honor of the Pontiff, His Holiness and entourage headed to the auditorium where the students presented a number of songs, including the Cilician and Pontifical anthems. At the conclusion of the program Vice-Principal Mrs. Rita Kaprielian delivered brief remarks and announced that the students had a gift for His Holiness. His Holiness also presented the students with gifts, and the event came to a close with this benediction.